ալ՝ արտաքին մեծ հրապարակում նոտաւ կառքը եւ ընդ համայն ուղեկիցն մեկնեցաւ ասաի ի Ս. Էջմիածնէ։

Նորին Արքայական Մեծութեան ուղեկից էին

Բարձրագոյն Միրզա Հիւսէյին խան՝ Պետութեան գլխաւոր քարտուղարն, որ եւ սպարապետ, արտաքին եւ պատերազմական գործոց առաջին նախարար է։

Վ. սեմ. Ալի Միրզա խան՝ Էղէտ-ուլ-մուլք, ցեղապետ Ղաճարայ, Կնքապետ եւն։

Վ. սեմ. Ալի Ռիզա խան՝ քեռորդի Շահին։

Մեծ. Իպրահիմ Բէյս եւն։

Մեծ. Աղա Իպրահիմ՝ առաջին սենեկապետ եւն։

Վ. սեմ. Մէյթի-ղուլի խան, քեռորդի Շահին։

Մեծ. Միրզա Ալի Նապի՝ հանդերձապետ։

Մեծ. Աղա Ռիզա՝ աջակից եւ գանձապահ։

Մեծ. Մուհամմէտ Հասան խան զօրավար՝ աջակից եւ առաջին թարգման։

Մեծ. Մուհամմէտ Ալի խան՝ առաջին գանձապետ։

Մեծ. Ջաֆար-ղուլի խան։

Մեծ. Սուլթան Հիւսէյին միրզա։

Մեծ. Ֆէրրուխ խան։

Մեծ. Ամահամատ Ալի՝ սեղանապետ։

Մեծ. Գաղղիացի Թոլոզան բժշկապետ։

Մեծ. Թէյմուր Փաշայ խան զօրավար՝ կառավարիչ Մակուայ։

Արգոյ Միրզա Ահմատ խան՝ հիւպատոս Ասարխանու։

Արգոյ Միրզա Մահմուտ խան՝ հիւպատոս Տփխիսայ։

Արգոյ Աղա Ռիզա։

Իսկ Ռուսաց Օգոստափառ՝ Վեհափառ եւ Բարեխնամ Կայսեր կողմանէ՝ սահմանէն սկսեալ յատուկ պատգամաւոր եւ ուղեկից էր Վ. սեմ. Իշխան Մէնշիկով։

Երեւանու Նահանգապետ Վ. սեմ. Բօսլաքէվ զօրավար, Երեւանեան բանակին նորոգ հրամանատար Վ. սեմ. Քոմարով զօրապետ, այրուձիոյ հրամանատար Վ. սեմ. Ամիրախվալով զօրավար եւ այլք եւս ուղեկցած էին։

Վեհ. Հայրապետի կողմանէ մինչեւ Երեւան Արեգակնափայլ Շահի վերադարձին ուղեկցեցան Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս Բաբամեանց, Գեր. Մեսրոպ Եպիսկոպոս Ամբատեանց եւ Արժ. Աբրահամ Վարդապետ։

Նորին Արքայական Մեծութիւնը՝ երբ ձեմարանէն կմեկնէր՝ 700 յանուն ձեմարանի եւ 300 յանուն կարօտելոց՝ ամենը հաղար ռբլ. նուիրեց։

ԶԳԵՍՏ.

Վ. սեմ. Պ. Յովհաննէս Յօնանեանց յանուն եւ ի յիշատակ Նորոգ Հանգուցեալ որդւոյն իւրոյ սիրելւոյ Յովհաննու Յօնանեանց՝ ոսկեթել եւ արծաթաթել գործուած դիպակէ մի ձեռք պատուական զգեստ՝ այս է՝ մի հատ շուրջառ, մի

փորուրար՝ երկու բաղպան՝ մի շապիկ՝ մի գօտի եւ մի ուրար (Սարկաւագի) նուիրեց Ս. Տաճարի Մայր Աթոռոյս Էջմիածնի՝ որոյ համար Ամենագրոյս միջոցաւ եւս խորին շնորհակալութիւն կմատուցանեմք յիշեալ բարեպաշտ իշխանին։

ՄԻԹԱՁ.

Նուշեցի բարեպաշտուհի այրի Սանամ Նիկողայոսեան Խաչատրեանց՝ յանուն եւ ի յիշատակ հանգուցեալ առն իւրոյ Աղապապայ Առաքելեան Խաչատրեանց՝ արծաթեայ ոսկեզօծ մի Խաչ նուիրեց Ս. Տաճարի Մայր Աթոռոյս՝ որոյ համար հրապարակաւ շնորհակալութիւն կայայտնեմք՝ գովելով յիշեալ այրւոյն բարեպաշտութիւնը եւ իղձը՝ որով անհարազատ ձեռքերէն ազատուած հնաշէն եւ ըստ բաւականին ճարտարահիւս յիշեալ Խաչը (կոթը միայն նոր է) անկորուստ էր պահել եւ ընծայեց Ս. Էջմիածնի։

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ.

Հետագայ դամբանական ճառը հրատարակել խնդրուած է։

(Ի հանդէս պատմութեանց հայոց, ցիշխանութեան ցիշխանէն ցիշխանէն վերածնելոյ է 19 դեկտեմբերի 1878 մի. սկսեալ է հանդէսաբար Ղազարեան նոյնն է 25 դեկտեմբերի։)

Այսօր Հայաստանեայց սուրբ Եկեղեցին կատարեց իւր բաջագործ պաշտպանաց սրբոց Վարդանանց 1036 վկայից հանդիսաւոր յիշատակը։ Եւ մինչ սուրբ պարտք էր համարում բարեմաղթել հանդիսատ հոգւոց բաջագործի անմանց որք նոյն պատերազմի մէջ բաջութեան անուն ժառանգեցին, եւ անա մի տխուր տեսարան է ներկայացնում մեզ սուրբ Եկեղեցին, ուստի աղաչեմ Քրիստոսասէր տխրազգեաց հանդիսականք, Քոյլ տուէք ինձ հանգուցելոյս դագաղի վերայ ասել մի քանի խօսք։

Մի երեւելի հոգեբան՝ մարդու կեանքը նմանեցնում է մի դառն բաժակի՝ որոյ եօթանասուն մասի երեքը միայն է բաղցր օշարակ։ Այս ինքն մինչեւ հասուն ծերութիւնը՝ որ եօթանասուն տարի հազիւ կլինի եւ աւելին ինչպէս բազմափորձ մարգարէն վկայում է, բոլորովին ցաւոք է եւ հեծութեամբ, հազիւ մարդոյ այդքան երկար կեանքի մէջ հաշուելով բոլոր ուրախ եւ երջանիկ օրերը՝ երեք տարի է լինում։ Ի՞նչ է արդեօք մեր կեանքի մնացեալ օրերը. հազարաւոր ցաւոց, վշտաց, տանջանաց, տառապանաց, սիրելեաց կորստեան եւ այլ բազմատեսակ թշուառութեանց խառնուրդով լցուած դառն բաժակ, որոյ յատակումն գրուած է մի սոսկալի բառ՝ մահ։

Բայց եւ այնպէս, ոչ ամենայն մարդոյ վիճակեալ է այդ դառն բաժակի մինչեւ վերջին կաթիլը վայելել։ Ոմանք մի օրական ծաղկի նման առաջին կաթիլը միայն ճաշակելով թառամում են։ Կեսք ծաղկաւէտ հասակի մէջ գերեզմանի խաւարային գուրը են գլորւում։ Եւ սակաւք ոմանք մինչեւ վերջին մրուրը բամելով ծերանում են։ Այս շատ անգամ տեսնում եմք, որ քիչ մարդիկ ծերութեամբ են մեռանում եւ շատերը, ինչպէս այս հանդուցեալը, հիւանդութեամբ եւ ցաւոք կեանքի կէս ճանապարհումը։

Մահը յաւիտենական օրինաց անջնջելի դատաւորն է՝ որ Արարիչը ահեղաստատ ժայռով որոտաց «Հող էիր եւ ի հող դարձցիս»։

Եղան աշխարհիս մէջ իմաստուն եւ հանճարեղ մարդիկ, աշխարհատատ փառաւոր թագաւորներ, որոց համար ոչ երկինքը եւ ոչ բաղդը խնայեցին հանճար, թագ, դայիսոն, իշխանութիւն, պատիւ, հարստութիւն, անուն, զեղեցկութիւն, քաջութիւն, մէկ խօսքով ամենայն վայելչութիւն ինչ որ աշխարհումս գտնւում է եւ որոց վայելողաց անուանում եմք բաղդաւոր եւ երջանիկ մարդիկ։ Բայց եթէ մտնեմք նոցա սրտի մէջ, նոցա հոյակապ պալատների մէջ, ոչինչ բաւականութիւն չեմք տեսնում։